նախորդ օրը զինադադար էր կնքուել և Ռուսաստանի ու կենտրոնական պետութիւնների միջև, պատերազմական գործողութիւնները կանգ առին ոչ միայն կովկասեան, այլ և ամբողջ պարսկական դծի ու Սև ծովի վրա: Հաստատուեցին 5 խառն մարմիններ՝ հսկելու համար զինադադարի պայմանների գործադրութեան վրա: Անդրկ. Կոմիսարիատը իր քայլի մասին անմիջապէս տեղեկացրեց և Միջագետքի անգլիական հրամանատարութեան ու Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչներին:

Զինադադարի կնքման պահուն, ռուս-թիւրքական ռազմաճակատը տարածւում էր աւելի քան 500 կիլոմետր երկարութեամբ—Սև-ծով—Բեալքիթ—Երզնկա—Մնուս—Վան ուղղութեամբ: Յետագային, Ուիլսընի իրաւարարութեամբ և Սևրի դաշնագրով հայերին յանձնուելիք ամբողջ Հայաստանը գտնուում էր ռուս բանակի գրաւման շրջանում:

Զինադադարի կնքումից յետոյ, 1918թ. յուն. 1-ին, կովկասեան բանակի հրամանատար զօր. Օղիչելիձէն Վեհիբ փաշայից ստացաւ մի նոր նամակ, որով, յանուն թիւրքական բանակի սպարապետ Էնվեր փաշայի, հարցւում էր, թէ ի՞նչ միջոցով կարելի է վերականգնել յարաբերութիւնները Կովկասի կառավարութեան հետ ու հաշտութիւն կնքել երկու երկրների միջև: Յուն. 15-ին Վեհիբ փաշան հաղորդեց, որ կենտրոնական պետութիւնների Բրեստ-Լիտովսկ հաւաքւած պատգամաւորները պատրաստ են ճանաչելու Անդրկովկասի անկախութիւնը, և որ վերջինս, ամենայն վստահութեամբ, կարող է ուղարկել իր ներկայացուցիչները:

Անդրկ. Կոմիսարիատը, յեղափոխական կենտրոնի և ազգային խորհուրդների ներկայացուցիչների հետ միասին, քննելով Վեհիբ փաշայի առաջարկը՝ պատասխանեց, թէ ինքը պէտք ունի խորհրդակցելու Ռուսաստանի ուրիշ ինքնավար շրջանների հետ ևս և 3 շաբաթից կը յայտնէ իր վերջնական որոշումը: Միաժամանակ Կոմիսարիատը թիւրքերի առաջարկութեան մասին իմացրեց խորհրդային իշխանութիւնը չճանաչող Ուկրայինայի և Հարաւ-Արեւելեան Դաշնակցութեան կառավարութիւններին՝ հրաւիրելով նրանց խորհրդաժողովի, փետրու. 1-ին, Թիֆլիսում: Սակայն, Ուկրայնական Կենտրոնական Ռադայից պատասխան չստացուեց, իսկ Հարաւ-Արեւելեան Դաշնակցութեան կառավարութիւնը թէև խորհրդաժողովի մտքին վերաբերուեց համակրանքով, բայց ներկայացուցիչ չուղարկեց, որով Անդրկովկասը ստիպւած էր մենակ վճռել պատերազմի և խաղաղութեան հարցը: Եւ փետրու. 1-ի նիստում, Անդրկ. Կոմիսարիատը, համախորհուրդ յեղափոխական կենտրոնի, ազգային խորհուրդների և բանակի հրամանատարութեան հետ, որոշեց տեղեկացնել Վեհիբ փաշային, թէ ինքը պատրաստ է սկսելու հաշտութեան բանակցութիւնները և խնդրում է հաղորդել տեղն ու վայրը, ուր կարող են հանդիպել իրար երկու կողմերի պատւիրակութիւնները: Նոյն նիստում որոշուեց, որ հաշտարար պատւիրակութեան կազմն ու հրահանգները կը մշակէ Սէյմը, որ պիտի բացւէր մի քանի օրից յետոյ: Փետրու. 3-ին հեռագրուեց Վեհիբ փաշային համաձայնութեան մասին, իսկ փետրու. 10-ին